

## ԿՐՈՆԱԿԱՆ

## ԱՍՏՈՒԱԾԱՅԻՆ ՏՆՕՐԻՆՈՒԹԻՒՆ

Անեցէք և քաղմացարուք և լցէք  
գերկիւք, և տիրեցէ՛ք դա՛մ :  
(ԾԱՅՈՒՆ Ա. 28)

Անեցէ՛ք և քաղմացէ՛ք և լեցուցէ՛ք երկիրը, և տիրեցէ՛ք ատուր : Երկրի տիրելու քաղմանը բնական է ամէն ազգի մէջ : Կան ազգեր որ կրցած են լիովին իրականացնել իրենց այդ քաղմանը և կան որ մնացած են կէս ճամբան և չեն յաջողած տիրել երկրի : Անոնք որ յաջողած են, յայտնապէս կը ցուցնեն թէ հետևողներ եղած են աստուածային պատուիրանին : Անոնք կատարած են տիրական պատուէրը, անած են, քաղմացած են, լեցուցած են երկիրը, և այդպէս տիրած ատուր : Իսկ անոնք որ չեն գործադրած Աստուծոյ հրամանը, պէտք եղած չափով չեն անած և չեն քաղմացած, և չեն լեցուցած երկիրը, բնականաբար և չեն կրցած տիրել ատուր :

Այս վերջինները, ձախողածները, սխալ տրամաբանութեամբ մը ուղած են իրենց ձախողութեան պատասխանատուութիւնը ուրիշներու վրայ ձգելով, փոխանակ ընդունելու թէ իրենք են որ թերացած են իրենց պարտականութեան մէջ : Երկրի տիրանալու համար Աստուած պայման դրած է անիւ, քաղմանալ և լեցնել երկիրը. անոնք որ այդ պայմանը չեն գործադրած, այդ պարտականութիւնը չեն կատարած, և հարկէ պիտի զրկուէին նաև երկրի տիրելու իրաւունքէն :

Ամէն իրաւունք կ'ենթադրէ նախնիքաց կամ զուգընթաց պարտաւորութիւն մը, երկրի տիրելու իրաւունքն ալ պայմանաւորուած է՝ անուամբ և րազմացումով՝ զայն լեցնելու պարտաւորութեամբ : Ուրեմն իրաւունքը ձեռք բերելու կամ պահպանելու համար անհրաժեշտ է կատարումը համապատասխան պարտականութեան :

Անեցէ՛ք և քաղմացէ՛ք և լեցուցէ՛ք երկիրը, և տիրեցէ՛ք ատուր : Տիրական այս պատուէրը շատ բնական և բանաւոր է ըստ ինքեան, հետևաբար ատուր հակառակ գործողները դատապարտուած են զրկուելու՝ երկրի տիրելու աստուածապարգև իրաւունքէն :

Աստուծոյ նախ տուած է մարդուն անելու և քաղմանալու կարողութիւնը և ապա պահանջած է որ մարդիկ լեցնեն երկիրը, և այդ գործին իբրև վարձք՝ տիրեն ատուր : Արդ անոնք որ վարձատրութեան ակնկալութիւն ունին՝ պէտք է որ նախ կատարեն իրենց պարտականութիւնը, անին, քաղմանան, լեցնեն երկիրը, ապա տիրեն ատուր, և իրենց աշխատանքով վերածեն զայն երջանիկ բնակավայրի մը : Այդպիսի երկիր մը արդարև կը դառնայ աստուածահաճոյ գրախտ մը՝ իրագործուած Երկնաւորին և երկրաւորներուն ցանկալի դործակցութեամբ :

Ուրեմն անոնք որ կը հնազանդին Աստուծոյ կամքին և կը գործադրեն ունոր հրամանները՝ կ'ընդունին անկէ իրենց վարձքը. իսկ անոնք որ կը թերանան իրենց պարտականութեան մէջ՝ կը կորսնցնեն իրենց վարձքը և կը զրկուին այն մեծամեծ բարիքներէն որոնց կը ցանկային հոգւով չափ :

ՆՈՐԱՅՐ ԱՐՔԵՊՍ .